միջավայրը, նկարագրեր է թուրք-քրդական կրկնակի լուծը, ասիական բռնակալութեան այդ բարդ ու հսկայ մեքենան, որու տակ դարերէ ի վեր կը անքար հայութեան մեծամասնութիւնը...

«Ժողովուրդը միշտ գտնուում էր նոյն դրութեան մէջ, որպէս մի թռչուն, որի բոյնը ֆանդուած է չար երեխայի ձեռքով. նա նստած է միշտ օրօրող տերեւի վրայ եւ չգիտէ ի՞նչ անէ: Բնակիչը սիրտ չունէր կրկին նորոգելու իր խրճիթը, որովհետեւ մտածում էր՝ արդեօք երկա՛ր կարող է բնակուել նրա մէջ, սիրտ չունէր միւս անգամ ցանել իր արտը, որովհետեւ յոյս չունէր, թէ կը յաջողուի՞ իրան ֆաղել իր հունձքը...

Քուրդը պետական փառասիրութիւն չունէր եւ ոչ հասկանալի էր նրա աշխարհակալութեան հպարտութիւնը: Նա նայում էր իր նրանցած ժողովրդի վրայ, որպէս այն սարերի խոտերի վրայ, ուր արածում էին նրա անասունները:

. . . . . .

Ահա՛ այսպիսի դրութեան մէջ էին այն ժամանակ — Արզրումի, Բայազէտի, Հաղբակայ, Վանի, Բաղէշի, Մուշի, Շատախու, Սասնոյ, Խիզանու, Մոզաց, Զարսանջախու, Քեղուայ գաւառները իրանց բազմաթիւ հայ բնակիչներով: Նրանց տիրում էր մի աւազակ ցեղ, որի աչ ձեռքը — իր սուրն էր, որի ոտքերը — իր նժոյգն էր, որի տունը — իր թեթեւ չադրը, որի հայրենիքը — ամէն տեղ, որի հունձքը — թշուառ մարդկութիւնը, որի օրէնքը եւ իրաւունքը — իր կամքը, որի կեանքի նպատակը — փշրել, խորտակել, ոչնչացրնել, որի գործող ոգին — իր երկաթէ սիրտը, վայրենի կատաղութիւնը եւ գազանական յանդգնութիւնը»... (*«Կայծեր»*, *հատ. Ա. էջ* 272–275):

Աքանչելիօրէն կը լուսաբանէ նաեւ հարազատ համայնքի ներքին էութիւնը, դասակարգերու բնոյթը, անոնց փոխյարաբերութիւնները, ամիրաներու, սարբաֆներու սոցիալական պաշտօնը, անոնց հլու ծառայականութիւնը հանդէպ թուրք կառավարութեան եւ կեղեքիչ ու կործանիչ «հովանաւորութիւնը» հանդէպ թշուառ, տրորուած, կրկնակի ու եռակի հարստահարուած հայ զանգուածը...

Թող թոյլ տրուի մեզ հատուած մը բերել Ասլանի մէկ երկար ճառէն.

«Քեռի Պետրոսները, Տէր Թոդիկները, կ'ըսէ Ասլանը... ժողովրդի առաջնորդող մասն են կազմում... այստեղ է մեր դժբախտութիւնը: Քեռի Պետրոսը (ֆուրդ իշխանի «շահբանդան») մատակարարում է իշխանին բոլոր պիտոյքները... սկսած ուտելեղէններից, հագուստից մինչեւ ամենամանր բաները... ինքն է գնահատում, ինքն է գրում իր տետրակների մէջ իր տուածը եւ տարեգլխին յայտնում է մի ահագին գումարի պահանջ: Միամիտ ֆուրդն ընդունում է, բայց նա փող չունի... եւ իր ստացած նիւթը փոխարինում է ուրիշ նիւթով: Այս վերջինը նա ունի: Բաւական է միայն, որ իշխանը բարեհաճէր մի արշաւանք գործել դէպի երկրի որեւիցէ կողմը եւ ահա նա վերադառնում է ոչխարների, ձիերի, կովերի, գորգերի ու կապերտների ահագին աւարով... Նա ամէն տեղ ունի իր գործակալները գողացած ապրանքը «սաղացնելու» համար:

... Ամէն մի ֆուրդ իշխան ունի դրանցից (Քեռի Պետրոսներից) մի-մի հատ: Քեռի Պետրոսներին ցանկալի է, որ իրանց իշխանը միշտ հաստատուն մնայ իր անսահման իշխանութեան մէջ, թէեւ նրանք գիտեն, որ իրանց ստացած մթերքը, յափշտակուած է հազարաւոր թշուառ հայերից»...

Մարօն, որ Ֆարհատի հետ լուռ, ուշադրութեամբ կը լսէր հռետորին, կը բացականչէ վրդովուած.

— *Պէտք է ոչնչացնել այս բոլոր Քեռի Պետրոսներին:*

— Դա ասիական կոշտ միջոց է չարութիւնը բառնալու համար — կը պատասխանէ Ասլանը... Փոխիր նրանց (աւազակների) կեանքի պայմանները եւ դու կը տեսնես, որ նրանք օրինաւոր մարդիկ կը դառնան... Դատապարտել նրանց չենք կարող, որովհետեւ մեր հասարակութիւնը իր փթած կազմակերպութեամբ ինքն է ծնել այն մարդիկներին...

— Ես ձեր ասածները չեմ հասկանում, պատասխանեց Մարօն... Ես գիտեմ միայն, որ պէտք է օձի գլուխը ջարդել, երբ տեսնում ես, որ նա պատրաստուել է քեզ խայթելու: Ես